

խոկման կոչուած իտալախօս մատենիկը, և ըսաւ. «Ամենէն սիրած գրքերէս մէկը կու տամ քեզի»։ Նստաւ, բացաւ անոր առաջին սպիտակ էջը, առաւ գրիչը, և սենեարիբ կրած անոր վրայ, այն ձեռքով՝ որ քնարերգեց Նոսագենիբ և կանգնեց Աշտարատը, այն ցամքած ու կիսազողոզ ձեռքով, որոյ միջէն Ալիշանի անծերանելի հոգւոյն աւիւնը կը հոսէր տակաւին, դրոշմեց հետագայ յուշարձանը իւր լայն սրտին, անոր մէջ հաւաքելով վիմագանդակ վերտառութեան մը բոլոր կանոնները. և մէն մի նշանախնց թղթէն յառաջ կը քանդակուէր հոգւոյս խորը.

Թիշատակ

Գ. Գ. Վարդաշապատ Կացումոյ

Ջոր սիրտը առողիմ և տուողիմ իմամամ

Ջամ զբացատրութիւն զորոյ և բամի

14 հոկտ. 1901

Գ. Ղևոնդ Մ. Ալիշան

Ամիս մը վերջ Բոսպորի ափանց վրայ կը հասնէր բոթը՝ հայ հանճարոյն այդ կոթողին կործանման՝ ժամանակին անողոք հարուածին ներքեւ։ Ութ ամիս յետոյ կը զգեսնէր դքսերու քաղաքին մէջ ուրիշ կոթող մ'ալ, Աւետարանչին մեծ աշտարակը հիւսաւորց։ Ողբացի այս վերջինս Բիւզանդիոնի էջերուն մէջ. իսկ առաջինը՝ սրտիս խորը, զի բռնութիւնը կը խեղդէր ձայնս։

Երեք տարի վերջ Ս. Ղազար կը դառնայի

ժիշ օրուան համար։ Ամէն մարդ և ամէն բան իւր տեղն էր. սակայն ամայի կը թուէր ինձ վանքը։ Հ. Ալիշան կը պակսէր։ Դարաւոր պերճ մայրի մ'ունիս տանդ առջև, որոյ հեշտ հովաւն ուղի ներքեւ նստեր են սերունդներ, և դու ինքն երկար տարիներ վայելեր ես անոր հմայքը։ Կը հեռանաս, ժիշ յետոյ կը դառնաս, և այդ մայր բին այլ ևս չկայ. և անոր տեղ կը տեսնես լայն դատարկութիւն մը՝ որ կը տխրեցնէ։ Այս տպաւորութիւնը զործեց ինձ մեծ ծերունայն պակասը Միխիթարայ դարաստին մէջ. պակասն անոր կախարդիչ պատկերին՝ որ շնորհք և պատկառանք կը ցանէր մենաստանի իւրաքանչիւր անկեան մէջ։ Խորապէս կը զգայի այդ պակասը։

Փութացի մենաստանին տապանատունը. միակ վայրն՝ ուր կրնայի դեռ գտնել Հ. Ալիշանը։ Իսկոյն աչքիս զարկաւ նկուղներու կափարչաց միոյն վրայ անոր դէմքը մարմարեայ։ Այն մեծ մարդը փոքրկացեր ամփոփուէր էր ամենուն համար համաչափ նեղ նկուղի մը մէջ։ Կը խոռվէր հոգիս այդ քարեղէն զլուխը ցուրտ և անմոռնչ, յուշարար դրուած խորհրդոյ այն կենդանաշունչ տաճարին, որ վերջին անգամ փառեցաւ ինձ ջերմագին։ Յուզուած ու տաժուկ բերբեր սենեցան այդ քարին, ջանալով սրտիս աշտարակը չիմփն ամուր կափարէն ներս հասցը. նեղ՝ անոր նուիրական ոսկերաց, և լսել գերեզմանին խորէն այն խորհրդաւոր իմաստը թաքուն, «զոր սիրտը առողին և տուողին իմանան քան զբացատրութիւն զորոյ և բանի»։

Հ. Վ. ՀՅԱՌԵՆԻ

ԱՐԶԱՆԱԳԻՐ ԱԼԻՇԱՆԻ ԵՐԵՎԱՆ

Իմանգ առ այստեղ ծնրադիր, հայ ուխտաւոր սրբասէր,
Հոս Ալիշան կը նընջէ գուարթուն՝ Հայոց Նահապետ.
Սիրոյ անծիր ծովերով խունկ և համբոյր անոր բեր,
Բիրբերուդ լոյսը նըւէր, Աւարայրի լուսին հետ։

Ովկիաններու բահեզին, վերջալոյսի ծիրանայն
Արշալոյսի ակունքներ կոյս մատներով կը յառնեն

Այրարատի Մուսաներն՝ Ալիշանի բերած ձօն.

Ու կ'երգեն յոյսը հայուն, մինչև ծագի լոյսն այգուն:

Հայ հանճարին սրբատաշ կոթողն է այս վեհապանծ

Հազար լարով նուրբ ջրնար, մարմար քարով սուրբ տաճար.

Կոյս Մուսայից հոգիէն ծրծած աւինն աննախանձ

Մասեաց զրկին անձկարօտ՝ երգեց Նաադեներն հեշտարար...

Երգեց երկինքն և երկիր, ու հողն Հայոց պաշտելի

Մասեաց բարձունքն ամպածրար, յաւերժական և վիհեր.

Ծառն ու ծաղիկ, հողն ու ջուր, տուն և տաճար խընկելի,

Շահաստաններն, արքաներն, ողջ հայրենիքն ողբ, աւեր:

Ահիւնացած զմբէթներ, սօսեաց անտառ դիցանուէր,

Այն գերբնական քնարով հոգիացան, կանգնեցան

Հայաստանի սրտին մէջ բիւր բազիններ, խարոյկներ,

Ու վրկաներ դէզադէզ ճենճերեցան, վառեցան...

Լըսեց, տեսաւ, հիացաւ... ցաւն անպատում խոցեց զայն.

Բուռն էր սիրոյ դէմ կռուիլ... հուսկ նըւաղած զոհ ինկաւ.

Հազար դարեր երկունքով ծընան հըսկայն Ալիշան

Հազար դարեր պիտ'օրհնեն զինքն ու կերտողն իր ամբաս:

Աստուած կերտեց Ալիշանն Հայաստանի Նահապետ,

Ու Նահապետն՝ Հայաստանն երկնից ձօնեց ուխտաւոր.

Թէ հայրենիքն՝ անաստուած երգես յախուռն, ո՛վ պուէտ,

Ուրացիր զու Հայաստանն ու Նահապետն ալևոր:

Ո՛վ հայորդի, թէ երբեք Ուրմպոսի բարձունքին

Մուսաներու քովն ի զուր փնտոս քու Սէր-Նահապետ,

Գիտցիր անոր շիրիմն հոս, բայց կուսական իր հոգին

Երկինքն ամբիժ սրբոց մէջ բազմած ի խինդ առ յաւէտ:

Հ. ԵՂՆ ՓԵՏԻՆԵԱՆ

